ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի **«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության բժիշկ-փորձագետի և տարածքային կենտրոնների աշխատողների կողմից իրականացվող այցելությունների համար վճարման կարգը հաստատելու մասին»** N 1183-Ն որոշման՝

- 1-ին կետի «բժիշկ-փորձագետի և տարածքային կենտրոնների աշխատողների (երկուսը միասին այսուհետ՝ աշխատող)» բառերը փոխարինել «բժիշկ-փորձագետի, անձի ֆունկցիոնալությունը և միջավայրային գործոնները գնահատող մասնագետների (երեքը միասին այսուհետ՝ բժիշկ-փորձագետ) և տարածքային կենտրոնների աշխատողների (բոլորը միասին այսուհետ՝ աշխատող)» բառերով.
- 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության «500» թիվը փոխարինել «800» թվով.
- հավելվածի 1-ին կետի «բժիշկ-փորձագետի և տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոններ) աշխատողների (երկուսը միասին այսուհետ՝ աշխատող)» բառերը փոխարինել «բժիշկ-փորձագետի, անձի ֆունկցիոնալությունը և միջավայրային գործոնները գնահատող մասնագետների (երեքը միասին այսուհետ՝ բժիշկ-փորձագետ) և տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոններ) աշխատողների (բոլորը միասին այսուհետ՝ աշխատող)» բառերով.
- հավելվածում և ձևերում «276-Ն որոշմամբ» բառերը փոխարինել «276-Ն, 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշումներով» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: